



ԴՎՔ	Դրամավարկային քաղաքականություն
ԵԿԲ	Եվրոպական Կենտրոնական բանկ
ԿԲ	Կենտրոնական բանկ
ԴՊՀ (ՖՊՀ)	Դաշնային (Ֆեդերալ) պահուստային համակարգ
ՍԳԻ, ԱԱԳ	Սպառողական գների ինդեքս, Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
MoM	Տվյալ ինդեքսը հաշվարկվել է շղթայական հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցնելով նախորդ ամսվա նույն ցուցանիշը
YoY	Տվյալ ինդեքսը հաշվարկվել է բազիսային հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցնելով նախորդ տարվա նույն ցուցանիշը
QoQ	Տվյալ ինդեքսը հաշվարկվել է շղթայական հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցնելով նախորդ եռամսյակի նույն ցուցանիշը
WoW	Որպես ցուցանիշի հիմք վերցվում է նախորդ շաբաթը
K	Հազար, ամերիկյան գրեյաձև
B	Միլիարդ, ամերիկյան գրեյաձև
PMI	Purchasing Managers' Index. ինդեքս է, որ ստացվում է տվյալ ոլորտում ներգրավված մասնագետների շրջանում անցկացված հարցումների հիման վրա, բնութագրում է տվյալ ոլորտում պահանջարկը, գործարար պայմանները, աճի միտումները
Core (բազային)	Ցուցիչ, որը ցույց է տալիս, որ տվյալ ինդեքսը հաշվարկվել է առանց հաշվի առնելու որոշ սեզոնային մեծ տարանջատում ունեցող բաղադրիչներ

Օգտագործված աղբյուրներ

- ՀՀ տնտեսական ցուցանիշների տվյալների համար որպես աղբյուր օգտագործվել են ՀՀ Կենտրոնական Բանկի, Ազգային Վիճակագրական Ծառայության, Ֆինանսների նախարարության, Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայի, Համաշխարհային Բանկի և Արժույթի Միջազգային Հիմնադրամի վիճակագրական բազաները, հրապարակումները և հաշվետվությունները,
- Արտաքին հատվածի տվյալների աղբյուրների համար տրված են բոլոր անհրաժեշտ հղումները

Ռիսկերի մասին նախազգուշացում

Սույն վերլուծական հաշվետվությունը պատրաստված է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից և կարող է օգտագործվել միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկատվություն: Վերլուծական հաշվետվությունը հիմնված է ներկայումս հասանելի հանրային տեղեկատվության վրա, որը ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն համարում է վստահելի: Սակայն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ոչ մի երաշխիք չի կարող տալ, որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն չպետք է ընկալվի որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ արժեթուղթ, օպցիոն, ֆյուչերս կամ ցանկացած այլ ֆինանսական գործիք գնելու կամ վաճառելու վերաբերյալ: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ոչ մի պատասխանատվություն չի կրում այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր վնասների համար, որոնք առաջացել են սույն հաշվետվության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով:


Կոնտակտային տվյալներ՝

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
ՀՀ, քաղաք Երևան, Պուշկինի 19
Վերլուծաբաններ՝ Թ.Սարգսյան, Ա.Մաթասյան
(010) 591 525, (010) 591 526

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

- 2017թ դեկտեմբերին ՀՀ տնտեսական ակտիվության ցուցանիշը նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշի նկատմամբ գրանցել է 12.6% (YoY) աճ: Սա վերջին երկու տարիներին դիտված առավելագույն արժեքներից է և զիջում է միայն 2017թ հոկտեմբերին գրանցված ցուցանիշին (17.2%, YoY): Հունվար-դեկտեմբերին 2016թ նույն ժամանակահատվածի նկատմամբ գրանցված աճն, իր հերթին, կազմել է 7.7% (YoY), որն 2011թ-ից ի վեր դիտված առավելագույն արժեքն է: Դեկտեմբերին տնտեսական ակտիվության ցուցանիշի աճին է նպաստել տնտեսության բոլոր ոլորտներում գրանցված աճողական դինամիկան:
- Առավել բարձր տեմպերով աճ է գրանցվել երկրի արդյունաբերության և ծառայությունների ոլորտներում: 2016թ դեկտեմբերի նկատմամբ արդյունաբերության ոլորտում աճը կազմել է 15.6% (YoY)՝ թողարկված արտադրանքի ծավալը հասնելով 169.6 մլրդ դրամի: Հունվար-դեկտեմբեր կտրվածքով տարեկան աճը կազմել է 12.6% (YoY): Նույնաբեր ամսվա նկատմամբ աճը ոլորտում կազմել է 10.2% (MoM):




- Ծառայությունների ծավալը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ աճել է 15.6% (YoY)՝ կազմելով 142.3 մլրդ դրամ: Հունվար-դեկտեմբեր կտրվածքով աճի տեմպերը գրանցել է 14.4% (YoY) ցուցանիշը: Նախորդ ամսվա նկատմամբ ոլորտում գրանցվել է 10.1% (MoM) աճ:

- Դեկտեմբեր ամսին գյուղատնտեսության ոլորտում գրանցվել է 3.3%(YoY) աճ՝ արտադրանքի ծավալը կազմելով 91.7 մլրդ դրամ, հունվար-դեկտեմբերին գրանցվել է 3% (YoY) անկում, իսկ դեկտեմբերին նախորդ ամսվա նկատմամբ՝ 11.1% աճ:
- Շինարարության և առևտրաշրջանառության ոլորտներում գրանցվել է համապատասխանաբար 10.4% և 12.7% (YoY) տարեկան, 83.4% և 35.1% (MoM) ամսական աճ՝ ծավալները կազմելով 91.3 և 333.3 մլրդ դրամ համապատասխանաբար: Հունվար – դեկտեմբերին ապահովվել է առևտրաշրջանառության 14%, իսկ շինարարության ծավալների 2.2% (YoY) աճ:


Գնային միջավայր

- 2017թ դեկտեմբերին 2016թ դեկտեմբերի համեմատ ՍԳԻ աճը կազմել է 2.6% (YoY): Այդ թվում, սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի գներն աճել են 5.3%-ով, ոչ պարենային ապրանքներինը՝ 1.7%-ով, ծառայությունների սակագները նվազել են 0.5%-ով (YoY):
- Հունվար-դեկտեմբերին 2016թ նույն ժամանակահատվածի նկատմամբ ՍԳԻ աճը կազմել է 1% (YoY), ապրանքային վերոնշյալ խմբերի համար՝ համապատասխանաբար 4.0%, -1.8% և -1.3% (YoY):
- 2017թ դեկտեմբերին նույնների նկատմամբ գնաճը երկրում կազմել է 1.5% (MoM):
- 2018թ. հունվարին 2017թ. հունվարի համեմատ սպառողական գների աճը ՀՀ-ում կազմել է 2.7% (YoY), այդ թվում՝ սննդամթերքինը և ոչ ալկոհոլային խմիչքինը 4.0%, ոչ պարենային ապրանքներինը՝ 3.5%, ծառայությունների սակագներինը՝ 0.6% (YoY):
- 2017թ դեկտեմբերի նկատմամբ նույնպես գնաճը կազմել է 2.7% (MoM)՝ հիմնականում պայմանավորվելով սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի 5.7% գնաճով: Ոչ պարենային ապրանքների գները նույն ժամանակահատվածում աճել են 1.5%-ով, իսկ ծառայությունների սակագները՝ 0.2%-ով (MoM):




ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

- 2017թ. դեկտեմբերին նոյեմբեր ամսվա համեմատ ՀՀ պետական բյուջեի եկամուտներն աճել են մոտ 13%-ով՝ կազմելով 128.7 մլրդ դրամ: Մինչույն ժամանակ գրանցվել է ծախսերի շուրջ 88.5% աճ (113.5 մլրդ դրամով): Նման աճը մեծապես պայմանավորել է «Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր» հոդվածի գծով գրանցված աճը՝ շուրջ 71.4 մլրդ դրամով:
- Արդյունքում, ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտը նոյեմբերյան 14.2 մլրդ-ից դեկտեմբերին խորացավ մինչև 112.9 մլրդ դրամ:
- Տարեկան կտրվածքով դեկտեմբերին ՀՀ պետական բյուջեի եկամուտներն ավելացել են 6.5%-ով, ծախսերը՝ 54.3%-ով, իսկ բացասական սալդոն խորացել է 73.2%-ով (YoY):




- ՀՀ պետական պարտքն 2017թ. դեկտեմբերին կազմել է շուրջ 6.7 մլրդ ԱՄՆ դոլար, ինչը 12.3%-ով գերազանցում է 2016թ. նույն ամսվա արժեքը և մոտ 5.3%-ով՝ 2017թ նոյեմբերի արժեքը: Միայն արտաքին պարտքը դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է մոտ 5.49 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ ամսվա նկատմամբ ավելանալով 7.2%-ով (MoM): Ներքին պարտքն, ընդհակառակը՝ նախորդ ամսվա նկատմամբ կրճատվել է 0.8%-ով (MoM)՝ կազմելով 1.28 մլրդ ԱՄՆ դոլար:



ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ


Արտաքին առևտուր

- 2017թ դեկտեմբեր ամսին ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ծավալը կազմել է 689.2 մլն ԱՄՆ դոլար՝ տարեկան կտրվածքով աճելով 41.4%-ով (YoY): Առևտրաշրջանառության կազմում արտահանման ծավալների աճը կազմել է 44.4%՝ հասնելով 231.9մլն դոլարի, իսկ ներմուծման ծավալներն աճել են 40.0%-ով՝ մինչև 457.3մլն ԱՄՆ դոլար (YoY):
- 2017թ նոյեմբերի նկատմամբ դեկտեմբերին ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ցուցանիշն աճել է 3.6%-ով (MoM): Ընդ որում՝ արտահանման ծավալներն ավելացել են 10.6%-ով, իսկ ներմուծման ծավալները՝ 0.3%-ով (MoM):
- ՀՀ արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը նոյեմբերյան -246.1 մլն ԱՄՆ դոլարից դեկտեմբերին կրճատվել է մինչև -225.4 մլն ԱՄՆ դոլար:



Դրամական հոսքեր


- Նոյեմբերին դրամական միջոցների զուտ ներհոսքը ՀՀ նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ կրճատվել է 22.4%-ով (YoY): Չորրորդ ամիսն անընդմեջ ՀՀ-ից դեպի ԱՄՆ գրանցվում է դրամական միջոցների արտահոսք՝ դեկտեմբերին կազմելով 8.5 մլն ԱՄՆ դոլար, իսկ ՌԴ-ից ներհոսքն աճել է 21.8%-ով (YoY)՝ կազմելով 80.6 մլն ԱՄՆ դոլար:
- Նախորդ ամսվա նկատմամբ դրամական միջոցների զուտ ներհոսքը ՀՀ աճել է 16.2%-ով, այդ թվում՝ ՌԴ-ից՝ 24.3%-ով, իսկ դեպի ԱՄՆ զուտ արտահոսքը կրճատվել 32.4%-ով (MoM):




ՀՀ դրամական միջոցների զուտ ներհոսք, կառուցվածք ըստ երկրների, մլն ԱՄՆ դոլար					
	Դեկտեմբեր 2016թ	Նոյեմբեր 2017թ	Դեկտեմբեր 2017թ	%, MoM	%, YoY
Զուտ ներհոսք	102,5	68.4	79.5	16.2	-22.4
այդ թվում՝					
ՌԴ	66,2	64.9	80.6	24.3	21.8
ԱՄՆ	11.6	(12.6)	(8.5)	-32.4	-173.6

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ և ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

- 2017թ. դեկտեմբեր ամսվա ընթացքում նոյեմբերի համեմատ գրանցվել է ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի ծավալների աճ՝ մոտ 4.6%-ով: Համաձայն ՀՀ ԱՎԾ տվյալների՝ դեկտեմբեր ամսվա վերջի դրությամբ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական և ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի ծավալները կազմել են 2,684.5 մլրդ ՀՀ դրամ: Ընդ որում, ամսական աճ են գրանցել և՛ ռեզիդենտներին և՛ ոչ ռեզիդենտներին տրամադրված դրամային և արտարժույթային վարկերի ծավալները:





- Չնայած, որ վարկավորման ընդհանուր ծավալներում հիփոթեքային վարկերի կշիռը 2016թ. համեմատ փոքր-ինչ նվազել է՝ այնուամենայնիվ 2010 թվականի վերջից ՀՀ հիփոթեքային շուկան ցուցաբերում է կայուն աճի միտումներ: 31.12.2017թ. դրությամբ ընդհանուր հիփոթեքային վարկերի պորտֆելը կազմել է 237.8 մլրդ ՀՀ դրամ: 2017թ. դեկտեմբեր ամսվա վերջի դրությամբ 2016թ. դեկտեմբերի համեմատ գրանցվել է ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների



կողմից տրամադրված հիփոթեքային վարկերի պորտֆելի աճ՝ 14.4%-ի չափով: Հիփոթեքային վարկավորման ծավալների աճի հետ մեկտեղ նկատվում է բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող հիփոթեքային վարկերի արժույթային կառուցվածքային փոփոխություն: Մասնավորապես, մինչև 2012 թվականի հունիս ամիսը գերակշռում էին դրամով տրամադրված հիփոթեքային վարկերը, ինչից հետո մինչ 2014թ. դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում արտարժույթային վարկերի ծավալները

շարունակեցին աճել՝ գերազանցելով դրամային վարկերի ծավալները (31.12.2014թ. դրությամբ տարբերությունը հասավ առավելագույն՝ մոտ 30.7 մլրդ. դրամի): 2015թ. տարվա սկզբից դրամային և արտարժույթային վարկերի ծավալների միջև տարբերությունը սկսեց աստիճանաբար նվազել, իսկ 2017թ. ապրիլից կրկին դրամային վարկերը գերազանցեցին արտարժույթային վարկերին: Համաձայն ՀՀ ԿԲ տվյալների՝ 31.12.2017թ. դրությամբ ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված դրամային և արտարժույթային հիփոթեքային վարկերի ծավալների միջև տարբերությունը կազմել է մոտ 17.4 մլրդ. ՀՀ դրամ (արտարժույթով տրամադրված հիփոթեքային վարկերը կազմել են ընդհանուր հիփոթեքային պորտֆելի մոտ 46.3%-ը):



- Առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալներն 2017թ. դեկտեմբեր ամսվա վերջի դրությամբ կազմել է մոտ 2,624.6 մլրդ. ՀՀ դրամ, ինչը մոտ 1.7%-ով գերազանցում է նախորդ ամսվա արժեքը: Ընդհանուր առմամբ, 2017թ. տարվա սկզբից բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալներն աճել են մոտ 10.6%-ով:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇՈՒԿԱ

ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՇՈՒԿԱ


- **EUR/USD:** 2018թ. հունվար ամսվա ընթացքում EUR/USD զույգը գրանցեց մոտ 3.53% աճ՝ հասնելով 2014թ.-ից հետո գրանցված առավելագույն արժեքների: ԵԿԲ հունվարյան նիստից հետո՝ չնայած, որ ԴՎԲ փոփոխություն տեղի չունեցավ, EUR/USD զույգը դեպի վեր հատեց 1.2500 արժեքի սահմանը: Եվրոյի արժևորումն առավելապես պայմանավորված էր ԱՄՆ դոլարի դիրքերի թուլացմամբ և ընթացիկ տարվա մեջ ԵԿԲ դրամավարկային քաղաքականության խթանող միջոցառումների նվազեցման սպասումներով: Նման սպասումներ ֆինանսական շուկայի մասնակիցների շրջանում ձևավորվել են վերջին ժամանակներս ԵՄ տնտեսության տարբեր հատվածներում գրանցվող դրական տեղաշարժերի մասին վկայող ցուցանիշների հրապարակման ֆոնին: Մասնավորապես, ԵՄ արդյունաբերական արտադրանքի տարեկան (YoY) աճը 2017թ. դեկտեմբերին կազմել է 5.2%, ինչը գերազանցում է և՛ նախորդ ամսվա աճը և՛ սպասումները, իսկ նոյեմբերյան 3.2% աճի տվյալը վերանայվել է՝ փոխարինվելով 3.7%-ով:
- 2018թ. հունվար ամսվա ընթացքում գրանցվել է գործարար ակտիվության աճ ԵՄ ծառայությունների ոլորտում (ծառայությունների ոլորտի PMI-ն նախորդ ամսվա 57.6 արժեքից աճել է մինչև 58): Արդյունաբերության և ծառայությունների ոլորտների բաղադրյալ PMI ինդեքսը ևս հունվար ամսին գերազանցել է դեկտեմբերյան արժեքը՝ կազմելով 58.8:
- Հունվար ամսին ԱՄՆ դոլարի փոխարժեքի թուլացման հիմնական պատճառն ԱՄՆ նախագահական ադմինիստրացիայի կողմից երկրի արտաքին առևտրում պրոտեկցիոնիստական բնույթի քաղաքականության և համաշխարհային առևտրի վրա դրա ազդեցության հետ կապված շուկայի մասնակիցների շրջանում առկա մտահոգությունների սրումն էր: Դոլարի անկումը որոշակիորեն զսպող գործոն հանդիսացավ Դավոսում կայացած Համաշխարհային տնտեսական ֆորումի շրջանակներում ԱՄՆ նախագահ Դ.Թրամփի մեկնաբանությունն արժևորված դոլար տեսնելու իր ադմինիստրացիայի ցանկության վերաբերյալ:



- EUR/USD փոխարժեքի հունվար ամսվա աճն արդեն փետրվար ամսվա սկզբից փոխարինվեց անկմամբ՝ պայմանավորված ԱՄՆ աշխատաշուկայի վերաբերյալ դրական ցուցանիշների հրապարակման ֆոնին ԱՄՆ դոլարի դիրքերի կտրուկ ամրապնդմամբ:
- 2018թ. հունվար ամսին ԱՄՆ ոչ գյուղատնտեսական ոլորտում զբաղվածների թիվն աճել է 200 հազարով, իսկ միջին ժամային եկամտի ամսական աճը կազմել է 0.3%: Միևնույն ժամանակ արդեն փետրվար ամսվա ընթացքում հրապարակված տվյալները ցույց տվեցին, որ հունվար ամսին ԱՄՆ-ում գրանցվել է ինֆլյացիայի տեմպերի փոքր-ինչ արագացում (ՍԳԻ ամսական աճը հունվարին կազմել է 0.5%, իսկ դեկտեմբերյան 0.1% աճի տվյալը վերանայվել է՝ փոխարինվելով 0.2%-ով):
- Աշխատանքի շուկայում դրական տեղաշարժերի և ինֆլյացիայի տեմպերի արագացման պայմաններում աճում է արդեն մարտ ամսվա ՖՊՀ նիստում ԴՎՔ տոկոսադրույքի բարձրացման հավանականությունը: Նշենք, որ հունվարի 31-ին տեղի ունեցած հերթական նիստում ՖՊՀ-ն որոշել էր ԴՎՔ տոկոսադրույքը թողնել անփոփոխ՝ 1.25-1.50% միջակայքում:
- **GBP/USD:** Փետրվարի 8-ին կայացավ Անգլիայի Բանկի հերթական նիստը և հրապարակվեց ԴՎՔ տոկոսադրույքի վերաբերյալ որոշումը: Տոկոսադրույքը պահպանվեց նախկին՝ 0.5%, մակարդակում, սակայն հրապարակվեցին տնտեսական կանխատեսումները և ԴՎՔ Կոմիտեի անդամները հայտարարեցին, որ եթե տնտեսությունն ընդհանուր առմամբ զարգանա կանխատեսումներին համապատասխան, ապա տոկոսադրույքի բարձրացում կլինի ավելի շուտ և ավելի մեծ չափով, ինչը հանգեցրեց բրիտանական արժույթի կտրուկ արժևորման. GBP/USD զույգը գրանցեց մոտ 1.3% աճ՝ դեպի վեր հատելով 1.4058 արժեքը: Բանկը բարձրացրել է ՀՆԱ աճի վերաբերյալ կանխատեսումները և այժմ առաջիկա երեք տարիներին ՀՆԱ միջին աճը կանխատեսվում է՝ 1.75%: Նշենք, որ Անգլիայի Բանկը վերջին տասը տարիների ընթացքում առաջին անգամ ԴՎՔ տոկոսադրույքը բարձրացրել էր 2017թ. նոյեմբերին և հայտարարել, որ առաջիկա երեք տարիներին սպասվում է ևս 2-անգամյա բարձրացում:
- Դրական կանխատեսումների հրապարակման ֆոնին GBP/USD զույգի գրանցած աճը, սակայն, անմիջապես փոխարինվեց անկմամբ և մինչ փետրվարի 12-ը փոխարժեքը հասավ 1.3790-ից ցածր արժեքների:



- USD/RUB:** Փետրվարի 8-ին USD/RUB փոխարժեքն 2018թ. տարվա սկզբից առաջին անգամ գերազանցեց 58 արժեքը: Ռուսական արժույթի դիրքերի նման թուլացումն առավելապես պայմանավորված է ներկայումս նավթի գների նվազմամբ: Brent տեսակի նավթի մեկ բարելի գինն արդեն փետրվար ամսվա սկզբից նվազել է մոտ 5.55%-ով՝ փետրվարի 8-ին հասնելով 64.5 ԱՄՆ դոլարից ցածր արժեքների (ԱՄՆ Էներգետիկայի նախարարությունը բարձրացրել է 2018թ. ԱՄՆ-ում նավթի արդյունահանման ծավալների աճի կանխատեսումը՝ մինչև 10.59 բարել/օր /այժմ արդյունահանման ծավալները՝ 10.2մլն բարել/օր):
- Փետրվարյան նիստում ՌԴ ԿԲ-ն որոշեց 0.25 կետով նվազեցնել ԴՎՔ բազային տոկոսադրույքը՝ այն սահմանելով 7.50%: Երկրում ինֆլյացիայի տեմպերի նվազման պայմաններում (հունվարին տարեկան ՍԳԻ-ն կազմել է 2.2% նախորդ ամսվա 2.5%-ի փոխարեն) ՌԴ ԿԲ կողմից ԴՎՔ բազային տոկոսադրույքի նվազեցումը սպասելի էր:




ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՇՈՒԿԱ

- Նավթի շուկա:** Հունվար ամսին նավթի շուկայում պահպանվել է նախորդ տարվանից գրանցվող աճողական դինամիկան՝ Բրենթ տեսակի նավթի բարելի ապրիլյան առաքման ֆյուչերսների գինը հասնելով 71 ԱՄՆ դոլարի: Նավթի գների աճը խթանող առանցքային գործոն էր այլ արժույթների նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքի նվազող դինամիկան:
- Բացի ԱՄՆ դոլարի փոխարժեքի թուլացումից նավթի գների աճը խթանող գործոն էր նաև ԱՄՆ-ում նավթի կոմերցիոն



պաշարների անընդմեջ կրճատումը մինչև 2015թ-ի փետրվարից հետո դիտված նվազագույն մակարդակները: Բացառություն կազմեց հունվարի վերջին շաբաթը, երբ երկրում նավթի պաշարներն աճեցին 6.7 մլն բարելով:

- Նշենք սակայն, որ նավթի արդյունահանման ծավալները երկրում շարունակում են աճել՝ ամսվա վերջին հասնելով պատմական բարձր մակարդակների՝ օրական 10.2 մլրդ բարել:



Ոսկու շուկա:

- 2018թ հունվար ամսին ոսկու շուկայում պահպանվել է գների աճողական դինամիկա, ինչի հիմքում ընկած առանցքային գործոնն այլ հիմնական արժույթների նկատմամբ ԱՄՆ դոլարի դիրքերի թուլացումն էր: Գնանշվելով ԱՄՆ դոլարով՝ միջազգային շուկայում ոսկու գինը մեծապես պայմանավորված է այլ արժույթների նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքի շարժով: Վերջինիս աճի դեպքում այլ արժույթների տնօրինող կոնտրագենտների համար ոսկին դառնում է առավել մատչելի, ինչի արդյունքում աճում է վերջինիս նկատմամբ պահանջարկը՝ գնի հաջորդող աճով, և՛ ընդհակառակը:

- Ամսվա ընթացքում ոսկու, որպես առավել հուսալի ակտիվի նկատմամբ պահանջարկը խթանվեց նաև հունվարի 20-22-ին ԱՄՆ կառավարության հարկադիր մասնակի պարապուրդի ֆոնին: Վերջինիս պատճառը Սենատում Կառավարության աշխատանքի ֆինանսավորման վերաբերյալ անհամաձայնությունն էր:

